

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱՂԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏՍՐԻ՝ ՆԻԻ ԵՈՐԻ, ՅՈՒՆՈՒԱՐ 15, ԹԻԻ 2. ԱՄԲՈՂՁ ԹԻԻ 146

The Haik,

A Journal devoted to Armenia, Armenians, and Oriental Peoples.

Edited by M. S. GABRIEL, M. D.
at 341 West 23rd St., New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական նշմարք.— Եւրոպական քաղաքականութեամբ մօր համագամայնքը.— Գիրք գրելու արուեստը՝ Հայր Մէմէվիշեանի.— Թղթակցի մը վայրահաշուութիւնը.— Ամերիկայի Հայոց վիճակը.— Վիճակագիր Ամերիկայի Հայոց. ԼՔ. ԼԳ. ԼԴ.— Նամակ Օրիորդ Պէթուէլէն.— Նամակ խմբագրութեամբ.— Այլևայլք.—

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԳԻՐԸ ԿԱՐԵՒՈՐ Է

Լոնտոնի ԱնկլէՀայկական Ընկերակցութեան նախագահ Տիար Ֆ. Ս. Սթիվէնսէն կը խնդրէ խմբագրութենէս իմանալ թէ Ամերիկայի մէջ որքան Հայ կայ Նիւ ինկլէնտի սահմաններէն դուրս։ Կը խնդրենք ուրեմն որ մեր յարգոյ բաժանորդներն ու թղթակիցք ամեն նաՀանչէ ու տեղէ ուր որ Հայեր կան, գրեն մեզ ամմիջապէս կատարեալ վիճակագիրը, որպէս զի կարող լինինք շուտով ամբողջանել վիճակագիրքը զոր 1897 ին սկսած ենք պատրաստել։

Յայտնի է մեր ընթերցողաց թէ մին-

չև Հիմա 31 տեղերէ միայն ստացած ենք վիճակագիր։

Տեսարակի մը Հեղինակը գործոյն լոյս տեսնելէն առաջ կ'ուզէ ծանուցանել մօտաւորադէպ լրագրաց միջոցաւ։ Այդու սովորականէ վեր կարեւորութիւն մը առած կը լինի Հեղինակը իւր երկոյն։ Աւելի լաւ կը լինէր որ տետրակը իւրոյս ելնէր և օրինակներն յղուէին խմբագրութեանց՝ ի ծանուցումն։

Ոմանք միևնոյն յօդուածը կը յղեն արտասահմանի բոլոր կամ գրեթէ բոլոր Հայ թերթերուն։ Դոքա չեն մտածեր թէ մեր արտասահմանի հաստարակութեան ընթերցող մասը գրեթէ բոլոր թերթերը կը տեսնէ, կը կարդայ, թէև չլինի ամենուն բաժանորդ։ Ի՞նչ հարկ կայ նոյն յօդուածը նոյն հաստարակութեան ներկայացնել քանի մը բերաններով։ առաջին հրատարակողինը կը կարգացուի, իսկ քիչ մը ուշացողներունը իբրև աւելորդ կը նկատուի։ «Հայք»ը չի պահանջեր որ ամեն լաւ յօդուած իրեն յղուի, բայց կը պահանջէ որ իրեն յղուածը չյղուի նաև ուրիշներուն։ Տիկի՛ն, Պարո՛ն, դու որ յօդուած մը կամ հրատարակութեան տալու գրուած մ'ունիս, չե՞ս կրնար դատել թէ նիւթին նայելով ո՞ր թերթին աւելի կը յարմարի, կամ, եթէ մէկէ աւելի թերթերու կը յարմարի, արդեօք անոնցմէ մէկը կամ միւսը աւելի համակրելի չէ՞ քեզի քեզի կայ թերթ մը որ քեզի ամենալաւը կ'երևի, անոր միայն յղէ յօդուածդ, և յանձն առ այդպէսով

ցոյց տալ նախընտրութիւնդ Այդ ալ
քաջութիւն է և առաքելութիւն

«Հայք»ը հանդէս և միանդամայն
լրաթերթ է, բայց աւելի հանդիսի հան-
գամանքն է տիրող: Երկար յօդուած-
ները, (երկարաբան ասեւ թէնք ուղեթի),
այսինքն ազգային խնդիրներու վրայ
գրուած լուրջ և տմբողջական երկասի-
րութիւն համարուելու արժանի յօդուած-
ները իրենց տեղը կը գտնեն Գայթի մէջ,
և միայն Հայքի մէջ, զի սա է քաղաքա-
կան ընտելութիւն ունեցող միակ ազգային
հանդէսը: 1891 ին ութ երես էր, 1893 ին
16 երեսի ելաւ երբ բաժանորդաց թիւը
400ի մօտ էր: Բայց այժմ 8 երես է նո-
րէն վասն զի քննարկ կը հրատարակուի
իւրիւրէն բաւական բաժանորդի: Եթէ չորս
հարիւր բաժանորդ ունենանք, անշուշտ
նորէն 16 երեսի կը հանենք:

Դուք, յարգելի ընթերցող, հիմա
ջանք մը կ'անեն այս թերթի բաժանորդ
գտնելու: Այժմ է ճիշդ պատահ ժամա-
նակը:

Եթէ մեր բաժանորդաց իւրաքան-
չիւրը մէկ ուրիշ բաժանորդ ալ գտնել
աշխատէր, կը յաջողէր և մենք ալ կրնա-
լինք: Հայքը 16 երեսի հանել կամ թէ
ամեն շաբաթն անգամ մը հրատարակել:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅԳԻ տարեկան բաժանորդագինն
է երկու տոլար, կամ 10 ֆրանք, (4 րուպ-
լի), ամեն երկրաց համար:

Հասցէ— Editor of Hajk,

341 West 23rd St. New York

Վիէննայէն կը գրեն մեզ—

Հոս սկսած է գերմաներէն ազատ և
անկախ թերթ մը հրատարակուիլ, իբր
փորձ հրատարակուած թուին մէջ շատ
պատաստուոր կը խօսի Հայոց նկատմամբ:
Արդեօք կերպով մը կրնա՞յ օգնուիլ այս
թերթին:

ՄԱՐԴՈՒ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ԻՎահանէ
Միհրանեան, Հրատարակիչ Գ. Տէօքմէ-
ճեան. 42 էջ. Բուսճուր. 1897. գինն է
50 սանթիմ:

Հ. Ս., Պօսթոն—Ստացեր եմ ձեր
համակրելի նամակը: պատասխանը յա-
ջորդ թուով:

ԵՒՐՈՊԱՆ ԳԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Հայոցս վերջին քանի մը տարիներու
քաղաքական փորձառութիւնը պէտք է
մեզ առաջնորդէ քանի մը բան մոռնալու
և քանի մը բան սովորելու:

Սովորելու բարեբէն մին է երոպական
քաղաքականութեան ընթացքն ու անոր
եղանակաւորութիւններն:

Եթէ հետզհետէ աւելի շեշտուող
բան մը կայ այդ քաղաքականութեան
պայմաններուն մէջ, այն ալ տէրութեանց
իրարմէ կախումն ունենալը կամ միջկա-
խութիւնն է: Այս պայմանը ի հնումն ևս
կար, բայց արդի ժամանակաց միջազգա-
յին սերտ և արագ յարաբերութեանց և
անտեսական պարագայից շնորհիւ արեւելի
զօրացած է, այնպէս որ չկայ ազգ մը որ
չարժի և գործէ ինչպէս ինքն կը կամի,
այլ ստիպուած է հաշուել մերձաւոր և
նոյն իսկ հեռաւոր տէրութեանց շահերն
ու դիւրազգայութիւններն: Եւրոպա իւր-
եւ բարձր կազմաւորութիւն, շատ զգա-
յուն է: Անոր մէկ մասին վրայ գոր-
ծուած ազդեցութիւնը ամեն կողմ հա-
ճելի կամ անհաճոյ հակադրութիւններ
կը պատճառէ:

Բոլորովին անկախ, ինքնակամ գոր-
ծելու կարող տէրութիւն մը չկայ զար-
դիս: Ամենէն հզօրներն, ամենէն անկախ
համարուածներն, Անգլիա, Գերմանիա,
Ռուսիա, չեն կրնար չարժուում մ'անել
առանց զսպիչ, եղանակաւորիչ կամ ար-
գելիչ հակաչարժում մը յառաջ բերելու:

1875 ին Պիսմարք ուղեց երկրորդ
անգամ պատերազմիլ Ֆրանսիոյ հետ և
բոլորովին ջախջախել զայն, բայց Չարն
«Ո՛չ» գոռաց, և երկաթ նախարարապետն
խոնարհեցաւ անմոռնչ:

Ռուսիա 1877 ին պատերազմեցաւ
Թուրքիոյ դէմ, յաղթեց, պիտի գար ի կի,
Պոլիս, իրաւունք ունէր գալու, կարող
էր գալ: Բայց ահա անդիէն Անգլիա քե-
չեց— չպիտի գաւ, չեմ թողուր:

Առջի տարին Չին և Ճապոն եկին Ի-
պոնոմար: Ճապոն յաղթեց, հաշտութեան
պայմաններն ընդունել տուաւ: Չինպոնոմար
նի, բայց ահա անդիէն Ռուսիա մէջ մտաւ
և յաղթականին ձեռնթափ անել տուաւ:
Անոր յաղթութեան պաշտօններուն վարձե-
ւորագոյնը, որոշեց զան ի պատշաճ

Թուրքիա և Յունաստան պատերազմեցան Օսմանցիք յաղթող հանգիստացան, գրաւեցին զԹեսսաղիոս, և զայն պարպել երբէք չպիտի յօժարէին եթէ Եւրոպա, մանաւանդ Անգլիա, չպնդէր թէ հարկ էր Թրքաց պարպել զայն, և կը յուսանք թէ Յունաստան վերստին տէր պիտի լիի Թեսսաղիոս:

Անգլիա առիթ գտաւ զեգիպտոս գրաւելու, ոչ նուազ և ոչ աւելի իրաւամբ քան ուրիշ տէրութիւնք գրաւած են այլ երկիրներ. բայց չի՛ համարձակիր յայտարարել թէ իւրն է եգիպտոս Պիաֆ ելենք Նեղոսի ամունքէն՝ կ'ասեն ու կը կրկնեն բրիտանական նախարարապետք, և աշխարհ գիտէ թէ սուտ է դա. բայց սուտ մը որ հաշուեալ է Ֆռանսական դիւրագլայութիւնը ամսքելու: Ֆրանսոս ևս կ'ընդունի անգլիական սուտը իբրեւ յարգանքի նշան մը զէպ ինքն, ի հարկէ յուսալով թէ օր մը թերեւ պատմական պատեհ պարագայք դիւրութիւն ընծայեն սուտը ճշմարտի վերածել տալու:

Այսօր Գերմանիա, Ռուսիա, Անգլիա, Ճապոն և Ֆռանսա, իբրեւ գայլեր, խողոված ինքն Ձիւնասփանի շուրջը, կ'ուզեն փարատել գէր ոչխարը, բայց ոչ մին կը թողզու որ միւսը խածնէ առնու իւր սիրած կտորը:

Հայկական կոտորածոց սկիզբը՝ Անգլիա Տարտանէլի մէջ ահագին նաւատորմիլ մը պատրաստ ունեցաւ, կ'ուզէր առնուլ զկ'Պոլիս, Ռուսիոյ ցանկալի պատառը, բայց տեսնելով որ Ռուսիա, Ֆռանսա, Գերմանիա դէմ են, չհամարձակեցաւ մտնել ներս, կորագլուխ քաշուեցաւ: Տէրութիւնք գոհ մնացին ի դերեւ հանելով Անգլիոյ խոշոր ծրագիրը, թողլով որ Սուլթանը լիովին ի գործ դնէ գիւրն ի կործանումն հայ ժողովրդին:

Մեծ խաղը այդ ատեն Ռուսիոյ և Անգլիոյ միջեւ խաղցուեցաւ, և հայկական ջարդերը նկատուեցան իբրեւ միջադէպ երկրորդական կարեւորութեան:

Բայց ինչ որ երկրորդական էր Եւրոպիոյ համար, մեզի համար առաջնական, կենսական խնդիր էր: Մեր սխալն յայտ էր որ չգիտցանք մեր խնդրոյն նայիլ Եւրոպիոյ աչքովը, միջազգային տեսակետէ, այլ ուզեցինք ընդհակառակն, և զարմանալի տղայամտութեամբ ուզեցինք որ մեր խնդիրը լինի կեդրոնական, և Եւրոպիոյ տէրութեանց ահագին շահերը չըր-

ջնանք: Դեռ Դեռ չուրջը թոռոհներն չարժին, պետութիւնք ընդհարին որպէս զի զմեր խնդիրը լուծեն:

Այս ատելով չենք ուզեր ամենեւին արդարացնել Եւրոպիոյ անհոգութիւնն ի բարեկարգել գէթ չ'սփռվ մը զԹուրքիա կամ անգորութիւնն ի իրաւանել, հայկական ջարդերն, այլ ցոյց տալ անգամ մ'ուս, և աւելի յստակօրէն թէ ուր էր մեր սխալը, ուր մեր անհասկացողութիւնը:

Թրքին դէմ անհուն իրաւունք ունինք, Եւրոպիոյ դէմ մեր գանգատներն ալ իրաւացի են, բայց ճանաչենք նաեւ մեր պատմութիւնները, մեր տղայական անընթաց հայեցողութիւնը:

Արդարութիւնը մեր կողմէն է, այսուհետեւ ևս անարդար շլինինք թեթեամբ տուութեամբ, յախոսան և խօլ արարքներս թող: Անդադար ուսանինք Եւրոպացի պատմութիւնը, ներկայն ու անցեալը, և ստիպու համբերութեամբ և խելօք քործունէութեամբ վերակազմենք մեր նիւթական և իմացական ոյժերը, կրթենք դեռահաս սերունդը, մեռածներու մեղքը հանենք անոնց հաւատարները, անոնք գերազանցողները, գործենք անդուլ, և պիտի ստանանք մեր իրաւունքը ուշ կամ կանուխ: Միայն չ'ոռնանք սա մեծ դասը թէ քանի որ մեծերն ու հզօրներն, վիթխարի տէրութիւնք անգամ, աղաժ չեն բոլորովին իննեց ուզածը իրենց փափաքած ժամուն առնու, այլ ստիպուած են ի համաձայնութիւն բերել կամ գալ, պատեհ առթի սպասել, և աջակից գտնել վերջապէս յաջողելու համար, — մենք որ տկար և պզտիկ ենք, մենք աւելի ևս ստիպուած ենք պատեհ առթի սպասել, անդադար պատրաստուիլ, զօրանալ ի ներքուստ, միանգամայն գտնել աջակից և նպաստաւորող արտաքուստ:

Հզօրներն իրենց զինուորական ոյժք գործածելու կը վարանին, պատերազմէ կը խորշին և կը ջանան դիւանագիտական միջոցներով իրենց փափաքներուն հասնիլ. մենք որ քիչ մը ոյժ ունինք, աւելի ևս հարկ է մեզ խնայել մեր ոյժերը և պատրաստել զայնս յարմար առթիւ չորժածելու, իսկ դիւանագիտական միջոցներով և հրատարակութեամբ մեր դատը ջատագովել և վեր իրաւունքը փաստել անդադար:

Այս պայմաններն յարգելով է որ պիտի հասնինք մեր արդար նպատակին:

ԳԻՐԻՔ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒ ԵՐՈՒՆԵՍՏԸ

Նորուս Հեղինակներուն ուղղեալ
քանի մը կարեւոր ակնարկութիւններ
գրեց

Հ. ԳԱՔՐԻԻԷԼ Վ. ՄԷՆԷՎԻՇԵԱՆ

Միլիթ. Ղախտէմ

Յաւելուած

ԳԻՐԻՔ ԿԱՐԴԱԼՈՒ ԱՐՈՒՆԵՍՏԸ

Վիէննա, Միւ. Տպարան. 1898. էջ 123.
Գին, 1 Փրանք 25 սանթիմ. (25 սէնթ.)

Հայր Մէնէվիշեանի այս գործը մեծ
չահեկանութեամբ պիտի կարգացուի,
վասն զի ոչ միայն իւր տեսակին մէջ ա-
ռաջին փորձն է մեր մէջ այլ և յոյժ լաւ
գրուած է: Նորուսներու ուղղուած է
գիրքը, բայց աներկբայ ենք թէ փորձա-
ռու գրիչներն ալ շատ բան պիտի գտնեն
հոն իրենց ուշադրութեանն արժանի:

Մեթոտով և քայլ առ քայլ յառաջ
կ'երթայ Հ. Մ. իւր նիւթին «կիզբէն
մինչև վերջը»—գրքի գաղափարը յղանա-
լէն մինչև անոր տպագրութիւնն ու հրա-
տարակութիւնը: Կը խօսի արժանաւոր
մատենագրի մը յատկութիւններուն վրայ,
կը ցուցնէ այն միջոցներն որք կը գիրա-
ցեն հեղինակելու աշխատանքը, գրքի
մը ճարտարապետութեանը մասին քանի
մը սկզբունքներ կը նշանակէ և ապա
կ'անցնի լեզուի, ոճոյ, ձեռագրի, սրբագ-
րութեան, տպագրական գրերու ընտրու-
թեան, և այլ արտաքին հանգամանաց
վրայ խօսելու:

Կարելի է ասել թէ հեղինակը երկու
գլխաւոր ձիւղի բաժներ է իւր գործը,
առաջինին մէջ ցոյց տալով գրքի մը ի-
մաստին, նիւթին, գաղափարաց վերա-
բերեալ սկիզբունքներն, և երկրորդին մէջ
ձեռն, արտաքին հանգամանացը, և ձեռա-
գրի ու տպագրութեան արուեստական
պահանջներուն վերաբերեալ գիտելիք-
ները:

Մեզի մասնաւորապէս հաճելի թուե-
ցան «գործնական ակնարկութիւններն»
ուր կրնար սակայն քիչ մ'աւելի շեշտել
գրուած մը կրկին ու կրկին սրբագրելու,
քննելու հարկը: Նորուս կամ քիչ ճարտար
հեղինակներու համար չէ միայն այդ հար-
կը: Հիւսիս ասեր է թէ Բասգալ հեղինա-
կը ունեցած է գերազանցող, բայց ոչ ոք
կրցած է գերազանցել Բասգալ զմառն-
նագիրն: Յիշաւի Բասգալայ «Գաւառական
Նամականին» ոճերու սքանչելագոյնն է:

Սակայն գիտենք թէ հիանալին փասգալ
այդ նամականերէն զոմանս տաճը, տասնե-
հինգ անգամ նորէն ու նորէն գրած է,
մինչև որ գոհ եղած է: Պիւֆոնի համար
ևս նոյնը կը պատմուի: Առաջին անգամ
գրածէն դժգոհ լինիլ, զայն կրկին ու
կրկին սրբագրելը աւելի մեծ մատենա-
գիրներու յատուկ է քան թէ հասարակ
գրողաց:

Օր մը գրելու յաւանութիւնն ունե-
ցող հայ մը ինծի պարծանօք յայտարա-
րեց թէ ինքը կարող է կէս գիշերէն յե-
տոյ ժամ մը գրիչը շարժել յօդուած մը
գրելու համար: «Շիտակ կ'ասես», խոր-
հրդածեցի ես ինծի, այդպիսի յօդուած-
ներ այդպիսի յօդուածագիրներ կ'ունե-
նան:

Դիտողութիւն մը միայն Հայր Մէնէ-
վիշեանին: Մեզ կը թուի թէ լաւ կը լի-
նէր եթէ աւելի ճշգիւ իրարմէ բաժնէր
նիւթին (fond) վերաբերեալ ձեռն (forme)
վերաբերեալէն: Օրինակի համար, «կո-
չումներ» ու նուիրուած գլխուն մէջ կը
խօսի «կոչում» անելու պէտքին, չափին,
աղբիւրին վրայ, և անկատար, պակասաւոր
կերպով գնոյնը անելու վրայ:—Դո՞քա գրքի
մը նիւթին վերաբերեալ մատենագրական
սկզբունքներ են, և լաւ էր որ ժ գլխոյն
տակ գար ժե գլխոյն այդ մասը: Իսկ
չակերտը ղնելու այս կամ այն կերպը ձեռ
վերաբերեալ խնդիր է, և կրնար արտա-
քին հանգամանաց շարքին մէջ գտնել
իւր տեղը: Կարծենք թէ գրքին պար-
զութեանը և գիտական յաւակութեանը
նպաստաւոր կը լինէր fond-ի և form-ի
վերաբերեալ խորատներուն աւելի խիստ
անջատում մը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ

NIPPUR

EXPLORATIONS AND ADVENTURES
ON THE EUPHRATES

BY

JOHN PUNNETT PETERS, PH. D.

Director of the Expedition

With Illustrations & Maps.

G. P. Putnam's Sons

New York & London

1897

Ա. Հատոր 375 երես, Բ. Հատոր 420 երես
Գին երկու հատորին 5 տոլար:

ԹՂԹԱԿՑԻ ՄԸ ՎԱՅՐԱՀԱՉՈՒԹԻՒՆԸ

«Արմէն» անուն ոմն, 1896 թուականին վերջերս, Պոսթոնէն կը գրէր ՄՇԱԿԻՆ թէ ՀԱՅԲԸ «գրաբար» խմբագրականներ կը հրատարակէ: Մեր թերթին անձանօթ ազգայինք կրնային սխալ գաղափար առնուլ, կարծելով թէ իրօք «գրաբար» էր «Հայք»ի լեզուն: Թղթականից մը պէտք է որոշ և պայծառ կերպով բացատրէ միտքը եթէ ունի ու և իցէ որոշ և պայծառ միտք: Զրմարիտ է թէ ՀԱՅԲԻ լեզուն եւրեք կը մօտենայ գրաբարին, բայց ուրեք ևս կը մօտենայ գաւառաբարբառներու, և այս մերձեցումներն ոչ յախուռն այլ հաշուեալ և հիմնաւոր են, ինչպէս պիտի ցուցնենք առանձին յօդուածով:

Պարոն Ա. տարի մը խորհել է յետոյ, կը գտնէ 1897 ին վերջերս, թէ ՀԱՅԲԻ լեզուն գրաբար կոչուելու չէ այլ «մուծ և անհասկանալի», «այնքան մուծ և անհասկանալի որ ընթերցողը միշտ խմբագրին դիմելու հարկին մէջ կը գտնուի հասկանալու թէ արդեօք այդ գրութիւնները Բաբելոնի մէջ՝ աշտարակաշինութեան ժամանակ են շարագրած:»

Հիմա կրնայ Ա. շնորհաւորել ինքզինք թէ իւր միտքը յստակ բացատրելու հնարը վերջապէս գտած է: Միայն թէ այդ միտքը անմասութեամբ լեցուն է և բանասիրական կարեւորութենէ զուրկ լինելով՝ արժանի է ուշադրութեան միայն իբրեւ ցուցիչ լրագրական վատ բարուց: Լեզու մը որ «մուծ և անհասկանալի» է, ամենէն գէշ լեզուն է:

Զարմանալի՞ բան. ուրիշներ, և Ա. քննչատ աւելի ուսեալ ազգայինք, կը համարին ՀԱՅԲԻ լեզուն ընտիր հայերէն:

Ազգային պատկառելի խմբագրութեան մը գլուխը դեռ քանի մը շարաթառաջ կը գրէր մեզ թէ ՀԱՅԲԸ «չատ սիրելի է» իրենց. միթէ այնու՞ սիրելի եղած որ «մուծ և անհասկանալի» է:

Երբ Հանդէս Ամսօրեայ, Բազմավէպ, Փարոս, Արծազանք և նոյն իսկ Մշակ Հայքէն խմբագրական կառույցներ կ'արտատպեն, միթէ իբրեւ նմոյ՞ «մուծ և անհասկանալի» գրութեան կ'ընծայեն զայնս իրենց ընթերցողաց:

Միթէ Ա. ինքը կը հաւատայ այն բանին զոր հաւատացնել կը փորձէ հանրութեան: Հասարակ գործաւորներն ան-

գամ կը հասկնան Հայքի հայերէնը, և Ա. գտնէ հասարակ գործաւորի մը չափ հայերէն գիտէ:

Ինչ չարժանութիւն ուրեմն Ա. կը խժժէ զՀայք: Հոս է հանրութեան հետաքրքրական կէտը: Պարզենք:

Նազարպէկեան, հայերէնի մեծ վարդապետ, զաւելտի նիւթ էր արած մեր լեզուն: Ա. որ հնչակ—Ապտակի խմբագրութեան վրայ սքանչացողներէն է և անցեալ տարի Մշակի մէջ զՀնչակեանները կը կոչէր ազգին «բարերարները» և կը մեղադրէր անոնց արժանիքը չճանցողներն, սաստիկ կատղած է ՀԱՅԲԻ դէմ, որոս հակահնչակեան երկարատեւ և յաջող պայքարին համար, և ուստի ՀԱՅԲԻ փնաս հասցնելու դիտմամբ իրեն յատուկ ծանծաղամտութեամբ կը բամբասէ զայն:

Որ կատղած Հնչակեան մը փորձէ խաճնել ՀԱՅԲԸ, թէև խայթը չարժէ մօղուկի մը խայթը, և ոչ վայրահաշութիւնը հաւասարի անոր բզզիւնին,—պայդ կը հասկնանք. բայց չենք հասկնար թէ ինչո՞ւ Մշակ, լրագրական «փողոցային» բարուց դէմ այնքան բողբոջ թերթը, գործիք կը լինի այդպիսի թշնամական, գծուծ և անհեթեթ բարբառներ մը հրատարակելու: Միթէ Մշակ արդա՞ր կը գտնէ Ա. ի դատողութիւնը. միթէ Մշակի համար ալ «մուծ և անհասկանալի» է մեր լեզուն. եթէ այո՞, թող իմաց տայ մեզ որպէս զի Ֆռանսառուս խորթաբանութիւններով պայծառացնենք այս տղերուն իմաստը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԸ

Մերթ ընդ մերթ արտասահմանի հայ մամուլի մէջ յօդուածներ կը կարդանք գրուած այնպիսի անձանց կողմանէ որք նոր հասած լինելով յԱմերիկա և դեռ ինքեանք անստոյգ և դժուարին կացութեան մէջ գտնուելով՝ իրենց տխուր ենթակայական տեսութիւնները կ'ընծայեն իբրեւ իրողութիւն: Այդպիսի գրութիւններն սխալ տեղեկութեանց աղբիւր մը կը դառնան հեռաւորաց համար:

Կը ճանաչենք և մեք թէ կայ Ամերիկայի Հայոց մէջ թշուառ, անգործ, ողորմելի փոքրամասնութիւն մը, հոս հոն քանի մը գինեմոլ, դատարկապորտ մը, խարերայ մը. բայց մեծամասնութեան ընդհանուր վիճակը գոհացուցիչ է տնտեսա-

պէս, և բաւական ստուար թիւ մ'ալ կայ այնպիսիներու, որոց գրքի, լրագրի, լսարանի, ընկերակցութեան և համայն գործոց ճաշակ ունին: Ամեն ուր որ Հայոց թիւը հարիւրով կը հաշուի, հոն մատենադարան մը հաստատուած է կամ հաստատուելու վրայ:

Իրաւ է թէ մերայնոց մեծ մասը գործաւոր են, բայց ճարտար գործաւորներ ալ կան անոնց մէջ: Կան նաև դերձակներ, կազմարարներ, ապագրիչներ, ելեքտրատիպներ, փորագրիչներ, կոշիակորներ, յամազգործներ, առևտրականներ, քանութագողներ, զանազան տեսակէ, և վաճառականներ ալ: Ունինք նաև քանի մը հայ հովիւներ Ամերիկայի եկեղեցեաց:

Նիւ Եորքի Հայոց վրայ մասնաւորելով խօսքը, կրնանք ասել թէ յաջող գաղթականութիւն մ'է այն: Արեւելեան գորգի և կապերտի և այլ վաճառաց առևտրով զբաղող քանի մը նշանաւոր վաճառատներ ունինք, ինչպէս Կիւլպէնկեան, Թաւաշեան, Գալակէօզեան, Եարտըմեան եղբարք, Բոսթիլեան եղբարք, Չատըրճեան եղբարք, Դէլֆէյեան և ընկ, որք մեծաքանակ վաճառող են: Ոմանք մեծ գրամագլուխ և անուն ունէին երբ սկսան, ինչպէս Կիւլպէնկեան և Գալակէօզեան, բայց շատերը քիչով կամ լոկ վարկով սկզբնաւորած են, և նշանաւոր հանդիսացած: 10—15 տարի առաջ անշան կերպով մը գործի սկսելով հիմա մեծ վաճառատան տէր եղածներուն մէկ նշանաւորացոյն է Յովհաննէս Թաւաշեան որ 75,000, ըստ ոմանց կարծեաց 50,000 տոլարի գրամագլուխ մը զիգած քիչ տարիներու մէջ:

Մեծաքանակ վաճառող այդ վեց տոներուն 4-ով պէտք է յիշել նաև հատա-վաճառ վաճառականները որպիսի են Տիւրան քէլէկեան, Հայկունի, Ալիոն, Տիգրան Վարժապետեան, Բէօլէյեան, Նուրեան, Եիւզիւքճեան եղբարք, Ա. Գասապեան, Տոնչեան եղբարք, Մեծիկեան եղբարք, Սինան, Մաթիկեան, Պոյաճեան ևն: Եարութիւն ալա իսկեան և Պողոս աղա Սարըեան, Գնագոյն վաղթականներ, ունին ամերիկեան գորգի գործարան:

Ճարտարարուեստից մէջ նշանաւոր են Պողոս Յակոբեան որ Բեաթիպեանի հետ ընկերութեամբ գործանոց մ'ունի կալվանօտիպ գծագրութեան, և Յովհան-

նէա Յակոբեան ու Խիւտովէրտի, որք նոյնպիսի գործանոց մ'ունին: Հիւլպիւզ Էլէքտրատիպութեան անկախ գործանոց մ'ունի և Շարճեան ընտիր կաղմարար է: Տաքագեան և Զամալեան նորագիծ և մաքրիչ են գորգերու: Կան երկու փառաքաններ, Մինասեան և Ֆէպապեան, և իբր 15 բժիշկներ:

Արդարութեան պարտք մ'է յայտաբարել հոս թէ Նիւ Եորքի հարստ Հայերը, քիչ բացառութեամբ, առատածն են իրենց խեղճ ազգակիցներուն և ազգայիններուն օգնելու մասին: Շարաթ չի' անցնիր առանց դոցա քսակիչ դիմում մը կամ քանի մը դիմումներ լինելու յանուս այս կամ այն թշուառ, կարօտ կամ ուղևոր Հայու: Եւ երբէք պարագ չեն ճամբեր:

ՎԻՃԱԿԱԳԻՐՔ ՍՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ԼԲ, Ֆիչպուրկ, Fitchburg, Mass.

Տեղւոյս Հայոց թիւը 120 է: Առանց մէջ կան եօթը տուն կամ ընտանիք, Խարբերդցի, Մալաթիացի, Սեբաստացի: Յիշում նաև թէ հոս կան նաև չորս տուն ասորի, և 10—15 անհատներ, Խարբերդէ: Մեր Հայերը մեծ մասամբ հայկական ճաշարանը կ'ապրին: Ընդհանրապէս մաքուր և պարկեշտ են, և Ամերիկացոց առջև ալ լաւ անուն ունին: Մեր երիտասարդները երկոյեան դպրոց կ'երթան, անգլիերէն կը սովորին: Ունինք նորակաղմ Հոգաբարձութիւն մը, որ ազգային և կրօնական ժողովներ կը կազմէ: Ուրախութեամբ կ'աւետում թէ հաստատուեցաւ նաև գրագարան մը, որ կը ճոխանայ շարունակ և կը մաղթեմ որ մեր գաղթականները ընթերցասիրութեամբ ճոխանաւ ու իրենց բարի անունն ու պատիւը նախանձախնդրութեամբ պահպանեն ընդ միշտ:

Յ. Ա. Ա.

Մ. Սփրինգֆիլդ, Springfield, Mass.

Տեղւոյս Հայոց թիւն է 11, Այնթապէն, Հաճընէն, Արարիկերէն, Պոլէն եկած: Արարիկերցի գորգ կը վաճառէ, խանութ կը պահէ: Միւսները գործարաններու մէջ կ'աշխատին: Երկու հոգի ալ զպրոցական են:

Ս.յս կողմի Հայերը ազելի դատակարար էն և պատիւ կը բերեն:

ጊዚያዊ ዐቅቦች ጥረቶችና

ՀԱՅՔԻ ԹՂԺԱԿԻԿ ԺԸ զԱՆՁԱՌ ԿԸ
յԱՅՈՒՆԷ ԹԷ ՊՕԹՈՆԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵՍԻՐԱ-
ԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ զԴԱՎԱՐԱՆԸ ՀԱՅԵ-
ՐԷՆ ԳՐԵՐՈՒ ՀԱՌ ԿԸ ԿԱՐՈՒՄ:

Գրադարանի Յանձնախումբը, որոյ մի անդամն եմ ես, ուրախութեամբ պիտի ճոխացնէ իւր գրադարան այնչափ փութով որչափ շուտով կարենայ ձեռք բերել Հարկաւոր միջոցները :

ጊሊሆሊካ ከባርዕብበት ፎኬሊን

Հայրենասէր անք

ճառէ ձեզ երբ լսէք թէ «անհամբեր
սպասողներ» «Հայք»ի «բացուած» է բա-
ժանորդագրութիւն»ը տողերուն վրայէն
կը ցատքեն: Ես չաօ զարմացած եմ
թէ ի՞նչն է սր մեր սրտեր կարծրացու-
ցած է այնպէս որ բաժանորդ գրուելու
համար կամք չենք կրնար ունենար:
Մտէ արձան Հայե՛ր, մենք ոչ միայն
բաժնեգիրն մը պէտք է տանք, այլ չաօ
ուելիքն:

Վերջապէս ես այն եզրահացութեան
հասած եմ, թէ մենք Հայերս (սահաւա-
թիւ բացառութեամբ) սատակի նման
անվերջ անզգայութեան մէջ թաղուած
ենք: Կը խեղագարիմ, աղբա՛ր, չգիտեմ
ի՞նչ պէտք է անել որ ընթերցասիրու-
թեան վարժունք:

ՀԱՄԲԱՐ

Թղթակից մը կը գրէ մեզի Նիւ Հէյ-
վընէն. —

Այնթապի մէջ կոտորածոց ժամանակին բողոքական և լուսաւորչական Հայերը միասին պաշտամունք կը կատարէին, որով բողոքականներն ազգային ինչ ինչ երգերու և աղօթից յարգը գնահատեցին և լուսաւորչականք ալ ուսեալ և կրթութեամբ երէցներ կամ քարոզիչներ ունենալու պէտքը զգացին: Հիմա լուսաւորչականներն մի երկրասարգ յղեր են Արմաշոռի պարտնոցը և Ռի ալ Անգլիա, Քէնթըրպէրիի ճեմարանը: Վերջինս հոն չմնալով եկած է Ամբրիկա և կ'ուսանի Նիւ Հէյվընի ԵՃԼ Համալսարանի աստուածաբանական բաժնում:

Նիւ Եորքի Հայոց Բարեգործական
Ընկերութեան Համար Հանգանակութիւն
մ'անելու նպատակաւ ընդհանուր ժողով
մը պիտի գումարուէր, բայց Հարկ եղաւ
յետաձգել նկատելով որ եկեղեցւոյն Հա-
մար Նոյնպիտի ժողովն և Հանգանակութիւն
անեյ կ'ուզուի տրեքս:

Ուսթըրի Հայոց Հոգաբարձութիւնն
ու առաջնորդը կը շարունակեն իրարու
դէմ կռուիլ: Հոգաբարձութեան նորո-
գումը չէ բարձած պայքարի պատճառը,
գտնէ առաջնորդի նպաստում մը: Հարկ
հաւարուի է: Բայց մեր կարծեօք այդ ալ
ազդեցիկ չաւանդն էր չպիտի լինի:

Ուստերի կուռղներն կրնան իրենք զիրենք չքմեղել ջանալ ցուցնելով թէ կուրը իրենց յատուկ մասութիւն մը չէ:

Հա Պոսթոնի մէջ ալ ինչ վարդապետին ու իւր Հոգաբարձութեան մէջ նմանօրինակ պայքար մը կայ: Նիւ Եորքցիք ալ իրենց քահանային չհաւնելով եպիսկոպոս մ'ունենալ կը ցանկան: Գոհ՝ Փրովիտէնսի Հայերն միայն կ'երեւին. Վաղինակ վարդապետն է բարեբախդ թէ Փրովիտէնսցիք:

Կը կարծուի թէ Մակեդոնական ճըգնաժամ մը պիտի պատահի յառաջիկայ գարուն:

Ռուսիոյ համար Նիւ Հէյվընի մէջ 10,000 Ուինչէսթըր հրացան ապսպրուած է: Գործարանը երկար ժամեր կ'աշխատի:

Թուրքիա մեծ գրահաւոր մը շինել տալ կ'ուզէ:

Չինաստան վերջապէս Գերմանիոյ գողացում տուած է՝ տալով գրիաօ Չու ծովախորշն ու յարակից հողը, անպայման ժամանակաւ վարձակալութեան մը ձեռն տակ:

Փեքինէն կը հեռագրեն Թայմցի թէ Հայնան կղզւոյ գրաւումը Ֆրանսայի կողմէն իբրեւ մօտալուտ կը նկատուի:

Տր. Ճէյմս Պ. Էնճէլ, Ամերիկայի դեսպանն կ'Կ. Պոլիս, պիտի փոխադրուի Փեքին, և անոր տեղ պիտի կարգուի Մր. Չարլզ Փէյճ:

Թուրքը Իսթէնտէրունի մէջ նոր չէնքեր կառուցանել կ'ուզէ իբրեւ զօրանոց և ռազմամթերքի և պաշարի համարանոց:

Կ. Պոլսէն կը հեռագրեն եղեր ի Լոնտոն ըստ Հէրալտի, թէ ոպառնացած են Ռուսական դեսպանատան ռումբ նետել եթէ Ռուսիա Հայոց վիճակին բարւոքման դէմ իւր հակառակութիւնը չդադրեցնէ:

Մալխաս Մալխասեան կամ Նշանեան երիտասարդը Պոլսոյ գաղթականաց հետ Ամերիկա եկած է, Սերաստիոյ Տուղասար գիւղացի է, և հիմա անյայտ է: Ո՛վ որ գիտէ նորա ուր կամ ինչ լինելն, թող հաճի իսէր մարդկութեան գիտցնել հետեալ հասցէին. —

Պողոս Պասմաճեան (Տուղասարցի)

P. O. B. 534
Whitinsville, Mass.

Ե. Մ. ԳԼԲԵԿԷՕ.ՔԵՆՆ

Տունը կը վաճառէ օմանեան ոսկւով փոխանակագիր Կ. Պոլսոյ վրայ: Քաղաքէն հեռու գտնուողը կ'արող են դրամ մը շրկելով փոխ-գիրը ստանալ:

Փոխ-գիր կը տրուի մեծ թէ փոք գումարներու համար, ի տես վճարելի:

Հասցէ —

A. & M. KARAGHEUSIAN,

71 Wall Street,

New York, N. Y.

ԹԵՆԿ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին ձեռագիրներ (manuscripts) և գրամներ կը գնենք, ինչպէս և ուրիշ պատուական հնութիւններ: Մեր վաճառատունն է թիւ 390 5th Ave., Նիւ Եորք.

ՏԻԳՐԱՆ ԲԷԼԷԿԵԱՆ:

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7րդ Էվլիփու Նիւ Եորք

26րդ և 27րդ փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

JOHN C. MORRISON

Յ. Ս. ՄՕՐԻՍԵՆԻ

ԴԵՂԱՐԱՆԸ

Կը գտնուի թիւ 262 Ութերորդ Էվլիփու, Մեծ Օբէրային հանդէպ 23 և 24 րդ փողոցներուն միջև:

Վստահելի դեղեր, բանաւոր գներով կը ծախենք:

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. Գ Ա Յ Ր Ի Է Լ Ե Ա Ն